

I

ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԵՐԵՔ ՔԱՆԴԱԿՆԵՐԻ  
ԹՎԱԳՐՄԱՆ ԽՆԴԻՐԸ

ՎԱՀԱԳՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Քրիստոնեությունը պետական կրոն հռչակած առաջին երկրի անդրանիկ Կաթողիկեն՝ քահանայապետության աթոռը, և Հայաստան աշխարհի հավատացյալների աղոթքի տունը՝ Տրդատ Մեծ թագավորի և սուրբ Գրիգոր Լուսավորչի օրոք Վաղարշապատ քաղաքում կառուցված Մայր տաճարն է: Եվ պատահական չէ, որ հայ մշակույթին նվիրված առաջին ուսումնասիրությունների անդրանիկ թիրախը, որն իր վրա սկեռեց ու քննության առարկա դարձավ օտարագրի և հայ հետազոտողների համար, Մայր տաճարի շինությունն էր և, մասնավորապես, նրա հյուսիսային ճակատի արևելյան հատվածում տեղադրված «Խաչապատկեր» և «Պողոս առաքյալ ու սուրբ Թեկղի» քանդակներն ու դրանց վրա տեղ գտած գրություններն էին (նկ. 1, 2)<sup>1</sup>: «Խաչապատկերի» գրություններն են. I. խաչն իր մեջ առած օղագոտու վրա՝ «Օգնիր այս եկեղեցում բոլոր աղոթողներին», II. խաչի հորիզոնական թևին, վերից և վարից գետեղված գրությունը, որ սարբեր ընթերցումների առիթ է տվել՝ «Ողորմեա Զվիթայ» և «Յիսուս որդի Աստուծոյ», III. օղագոտուց ցած, ձախ կողմում՝ «Տեր, ողորմիր քո ծառա Արքեային», աջ կողմում՝ «ն Տեր ողորմիր Էլպիդին», IV. ծիծեռնակապոչ տախտակին՝ «Դանիել, Տիրեր, Գարիկիինիս»: «Պողոս առաքյալ ու սուրբ Թեկղի» քանդակի գրություններն են. I. աջակողմյան պատկերի վերին մասում՝ «Պողոս», II. ձախակողմյան պատկերի վերին մասում՝ «Թեկղի»:

«Սուրբ Երրորդություն» քանդակը տեղադրված է տաճարի հարավային ճակատի արևմտյան հատվածում (նկ. 3): Որքան էլ զարմանալի թվա, շուրջ մեկուկես դար քանդակը ոչ մեկը չէր նկատել, առաջին անգամ այն շրջանառության մեջ ենք դրել 1986-ին<sup>2</sup>:

Հայաստանի վաղ միջնադարի պաշտամունքային շինություններին ու կոթողներին տեղ գտած հարյուրավոր քանդակներից ոչ մեկը նման հետաքրքրության

<sup>1</sup> Քանդակների գծապատկերներն առաջին անգամ շրջանառության մեջ է դրել Հ. Շահյաթունյանցը. տե՛ս Հ. Շահյաթունյանց. Ստորագրություն Կաթողիկե Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. Ա, Էջմիածին, 1942, էջ 19, 20: Գրությունների մասին մանրամասն տե՛ս Յոսիպ Մտրչիգոնովսկի. Էջմիածնի աւետարանը (այսուհետ՝ Հ. Ստրժիգովսկի), թարգմանեց Հ. Բառնաբաս Վ. Պիլեգիկճեան, Վիեննա, 1892, էջ 5-7:

<sup>2</sup> Վ. Գրիգորյան. Էջմիածնի Մայր Տաճարը. - ՀՄՄՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1986, -7, էջ 77: Սույն հոդվածում առաջադրել ենք այն տեսակետը, որ Մայր տաճարի շինության հիմնական մասը և երեք քանդակները պահպանվել են Տրդատ Մեծի և Գրիգոր Լուսավորչի օրոք հիմնադրված կառույցից: Խնդրո առարկա երեք քանդակների գնումը, չափազորումը և լուսանկարումը կատարել ենք ի մոտո՝ վերամբարձ կռունկի հարթակից:

և այդքան իրարամերժ կարծիքների չի արժանացել, որքան Մայր տաճարի հյուսիսային պատի քանդակները: Թեև մինչ օրս, շուրջ երկու տասնյակ հրապարակումներում խնդիրը հստակեցնելու և ձևակերպելու փորձ անգամ չի արվել, այսուհանդերձ քննության կառնենք XIX դարում առաջ քաշված տեսակետները:

Ֆրեդերիկ Դյուբուա դը Մոնպերյեն էջմիածին է այցելել 1834-ին: Նրա կարծիքով, ինչը տեղ է գտել նաև Մայր տաճարի վերակազմության իր նախագծում, Տրդատ Մեծի ու Գրիգոր Լուսավորչի հիմնադրած կառույցի որոշակի մասը պահպանվել է. «Ես նրանցից (վանականներից – Վ. Գ.) հարցրեցի, թե արդյոք կան հին արձանագրություններ, ինձ պատասխանեցին, որ եկեղեցին բազմիցս ավերվել, թալանվել, կողոպտվել, վերակառուցվել է, և այն ամենը, ինչ հին էր, անհետացել է: Բայց և այնպես ամենահետաքրքրականներից մեկը գերծ է մնացել կործանումից, դա հունարեն է և տեղադրված է բավականին բարձր (20 և մի քանի ոտնաչափ) հյուսիս նայող արտաքին ճակատի վրա»<sup>3</sup>: Դյուբուան անդրադառնում է նաև «Խաչապատկերի» գրություններին. առաջին գրության ընթերցումը համահունչ է այսօր ընդունված թարգմանությանը. երկրորդի մասին ոչինչ չի ասում. երրորդը ընթերցում է. «Տեր ողորմիր քո հին ծառային, Տեր, ողորմիր նրա հավատքը»<sup>4</sup>, իսկ չորրորդ՝ «Դանիել, Տիրեր, Գարիկինիս» գրությունը մեկնաբանում է հետևյալ կերպ. «Ներքևում, կարտուշի մեջ, նշված են գրության հեղինակների անունները: ...պատրիարքների անվանացանկում... ոչ մեկը Դանիել անուն չի կրել: Գարիկինիս նշանակում է Կարինից, որը Էրզրում քաղաքի հին անունն է»<sup>5</sup>:

Դժվար չէ նկատել, որ երրորդ գրության թարգմանության մեջ Արքեա և Էլպիդ անունները բացակայում են, ուստի այդ թյուրիմացությանը, ինչպես նաև դրա հիման վրա արված մեկնաբանությանը, կարծում ենք, անդրադառնալու հարկ չկա: Ինչ վերաբերում է գիտնականի այն տեսակետին, ըստ որի, շինության հյուսիսարևելյան հատվածը մեզ է հասել Տրդատաշեն տաճարից, լիովին ընդունելի է:

Էժեն Բորեն, որ էջմիածին էր այցելել 1838-ին, գրում է. «Այս հուշարձանի որոշակի մի մաս պահպանվել է մինչև օրս, մյուս մասերը՝ վերականգնված Կոմիտաս կաթողիկոսի կողմից, մոտավորապես հազար երեք հարյուր տարվա վաղեմություն ունեն: Առաջին շրջանից եկող նախաբեմի արտաքին պատից ես երկու, հունարեն լեզվով, գրություն եմ արտագրել, որի տառատեսակները հուշում են, որ այս գրությունները գալիս են մեր թվականության առաջին դարերից: Դրանք գտնվում էին տապանաքարերին, որոնք կառույցի մեջ են դրվել իբրև սովորական շինանյութ. Կոստանդնուպոլսում հայերը դեռևս շարունակում են նախնյաց շիրմաքարերով եկեղեցիներ կառուցել: Քրիստոնեական աղոթքներով շրջապատված հանգուցյալի անունը մեկում և սուրբ Պողոսի և սուրբ Թեկղեի անունները, որ կարդում ենք մյուսում, կարծես ապացուցում են երկու փաստ, որոնք միանգամայն արժանի են հիշատակման. առաջին հերթին քրիստոնեությունն

<sup>3</sup> F. Dubois de Montpéroux, Voyage autour du Caucase, t. III. Paris, 1839, p. 376.

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 377:

արդեն իսկ որոշակի տարածում էր գտել այդ վայրերում մինչև սուրբ Գրիգորի մուտքը, ով վերջնականապես փոխեց ազգի կրոնը: Եվ երկրորդը, հունարեն լեզուն պատարագում օգտագործվում էր սիրիերենի հետ, որը ոմանց պատկերացումով այդ ժամանակ գործածության մեջ եղող միակ լեզուն էր»<sup>6</sup>:

Անթվակիր, մատենագրական որևէ տեղեկություն չունեցող այս գրությունների թվագրման համար կարող են հիմք ծառայել տառաձևերը, հիշատակվող անունները և բովանդակությունը: Է. Բորեն տառաձևերի հիման վրա գրությունները թվագրում է I–III դդ., սակայն որևէ փաստ կամ որևէ դիտարկում չի ներկայացնում, և մնում է անհասկանալի, թե ի նչն է նրան հուշել նման ենթադրության համար: Հիշատակվող անձնանունները՝ Արքեա, Էլպիդ, Տիրեր, Գարիկինիս և Ջվիթ (եթե վերջինս ընդունենք իբրև անձնանուն), վաղ միջնադարյան մատենագրությանն անհայտ անձինք են, հետևաբար, նրանց առնչությունն այդ ժամանակաշրջանի հետ մտացածին է: Բովանդակության առումով «Պողոս» և «Թեկլի» գրությունները միայն հուշում են, որ այդ սրբերի անունները կարող էին գրվել առաջին դարից մինչև մեր օրերը: «Նաչապատկերի» գրությունները ևս կոնկրետ ժամանակի, ժամանակագրական սահմաններին վերաբերող որևէ փաստ կամ կողմնորոշիչ տեղեկություն չեն պարունակում: Դրանք, բացի ծիծեռնակապոչ տախտակի երեք անուններից, աղոթքներ են. «Աղաչանք առ անձ, մաղթանք, խնդրուածք, պաղատանք. խօսք ընդ այ. և ուխտ սրտի առ անձ»<sup>7</sup>: Է. Բորեն «Տեր, ողորմիր քո ծառա Արքեային» աղոթքում հիշատակված Արքեային համարում է ննջեցյալ<sup>8</sup>: Եթե աղոթքի տեքստում անտեսենք «քո ծառա» արտահայտությունը, ինչը բովանդակության մեջ որևէ էական դեր չի խաղում, քանզի բոլոր մահկանացուներն էլ, առանց բացառության, տիրոջ ծառաներն են, ապա կստացվի, որ Տեր և Արքեա անձնանունների միջև ընկած միակ բառը՝ «ողորմիր», բավարար է՝ Արքեային համարելու ննջեցյալ:

Քրիստոսի ծննդից ավելի քան հազար տարի առաջ Դավիթ թագավորն իր Աստուծուց ողորմություն էր խնդրում. «Հոգիս իմ սուրբ պահիր, Տէր. /փրկիր Աստուած իմ, քո ծառային, / որ հույսը դրել է քեզ վրայ: Ողորմիր ինձ, Տէր, քանզի գիշեր - ցերեկ քեզ կանչեցի»<sup>9</sup>: Մեսրոպ Մաշտոցի «Ողբ-Ողորմեա» կանոնիկ անվանումը կրող շուրջ հինգ տասնյակ օրհներգերը խնդրանք ու պաղատանք են առ Աստված. «Ողորմիր ինձ, Աստված: /Լսելով փողի ձայնն (այն) ահավոր օրը, /երբ հնչեցնի հրեշտակապետը / և կանչի դատաստանի/, ողորմիր ինձ Աստված»<sup>10</sup>: Դավիթ թագավորի և Մեսրոպ Մաշտոցի հայտնի անձնավորություններ լինելու և աղոթքները

<sup>6</sup> E. B o r é. Correspondance et Mémoires d'un voyageur en Orient, t. second. Paris, 1840, p. 40–41.

<sup>7</sup> Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հ. Ա, Երևան, 1979, էջ 47:

<sup>8</sup> Էլպիդին վերաբերող գրությունը մինչև Հ. Ստրժիգովսկու աշխատությունը համարվել է անընթեռնելի. «...յանկեն՝ անստույգ բառք, վերջինն Էլբիտին գուցէ Յոյս կամ Յուսիկ նշանակիցէ» (Ղ. Ալիշ ա ն. Այրարատ բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ – ւ. Ղազար, 1890, էջ 213):

<sup>9</sup> Աստվածաշունչ, ւ. Էջմիածին, 1994, էջ 790:

<sup>10</sup> Մ ե ս ր պ Մ ա շ տ ո ջ, Մ ա հ ա կ Պ ա ր թ և. Օրհներգեր, Երևան, 2010, էջ 33:

նրանց պատկանելու պարագան, նույնիսկ անկախ բովանդակությունից, ավելի քան բավարար է՝ ըմբռնելու, որ նրանք ննջեցյալներ չեն:

Նկատենք, որ Աստծո նորոգման աղոթքով են դիմում նաև մուսուլմանները. «/Հիշիր/ այն ժամանակը, երբ երիտասարդները ապաստանեցին քարանձավում և ասացին. «Տե՛ր իմ, քո կողմից մեզ նորոգման ընծայիր և մեզ համար փրկության ելք ապահովիր»<sup>11</sup>: Գրության հեղինակն, այստեղ անհայտ է, սակայն բովանդակությունը հուշում է, որ նորոգման հայցողը ննջեցյալ չէ:

Բազմաթիվ են նաև միջնադարյան հուշարձաններին փորագրված աղոթքները: «Աձ, ողորմի Սարգիս եպ (իս)կոպոս/ին և ուստայ Սարգ (սին) / և աշակերտաց նորայ՝ /Հերայետին, Դավթին, Յէտու (ին) / Կարապետին: Յիշեցէք ի (տր)»<sup>12</sup>: Սանահինի գավթի արձանագրության մեջ հիշատակված անձինք հայտնի չեն, նրանց ողջ կամ ննջեցյալներ լինելու մասին բովանդակության մեջ որևէ տվյալ գոյություն չունի: Այս պարագայում նրանց ողջ լինելը պարզ է դառնում գավթի մեկ այլ՝ վանքի կառույցների մեծ մասի նորոգման աշխատանքների ձեռնարկի հեղինակ Արղությանի 1652 թվակիր արձանագրության շնորհիվ: Ս. Բարխուդարյանն այս առիթով նկատում է. «Եթե իշխան արհիեպիսկոպոս Սարգիսը զլացել է իր արձանագրության մեջ հիշատակել ճարտարապետ Սարգսին և նրա գործընկերների անունները, ապա այդ համեստ շինարարները՝ իրենց համար առանձին արձանագրություն գրելով, չեն զլացել հիշատակել նաև Սարգիս առաջնորդի անունը»<sup>13</sup>: Բերենք մեկ այլ օրինակ խաչքարերին փորագրված աղոթքներից. «Աստուած ողորմեա Տիմոթին և /Մխիթարա խաչիս յարինող /ՈԿԲ:թ (վին)»<sup>14</sup>: Այստեղ խոսքը վերաբերում է Գեղարդավանքի գավթում կանգնեցված խաչքարը կերտող վարպետների ստորագրությանը:

Ուրեմն, վերոհիշյալ և նմանօրինակ բազմաթիվ աղոթքներում հիշատակված անձին կամ անձանց՝ ողջ կամ ննջեցյալ համարելու համար ուղղակի կամ անուղղակի տեղեկությունների առկայությունը պարտադիր է: Ավելորդ չէ մեկ անգամ ևս նշել, որ «Խաչքանդակի» գրության մեջ, Տեր և անձանթ Արքեա անուններից բացի, կա միայն մեկ բառ՝ ողորմի, ինչը, բնականաբար, որևէ հիմք չի տալիս Արքեային ննջեցյալ համարելու:

Է. Բորեի՝ Արքեային հանիրավի ննջեցյալ համարելու վարկածը, անկասկած, ծագել է ոչ թե աղոթքի տեքստի քննությունից, այլ նրա առաջ քաշած մեկ այլ վարկածից, ըստ որի, քանդակները տապանաքարերի վրա են եղել և Մայր տաճարի կառուցման ժամանակ դրանք գերեզմանոցից, գերեզմանների վրայից հանել են և, իբրև սովորական շինանյութ, բերել ու դրել են հյուսիսային պատի շարվածքում: Այստեղ գործ ունենք արդեն քանդակների պատկանելության՝ կարևոր հարցի հետ: Հայկական եկեղեցիների

<sup>11</sup> Սուրբ Ղուրան, Երևան, 2006, էջ 596:

<sup>12</sup> Կ. Ղ ա Ֆ ա դ ա ր յ ա ն. Սանահինի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 140:

<sup>13</sup> Ս. Բ ա ր խ ու դ ա ր յ ա ն. Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Երևան, 1963, էջ 112:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 141:

պատերի շարվածքում կոթողների ու հատկապես խաչքարերի բեկորների օգտագործման օրինակներն այնքան շատ են և ակնառու, որ անգամ օտարազգի գիտնականի աչքից չէին կարող վրիպել: Սակայն է. Բորեն, ինչպես և նրա տեղեկատուն, պարզապես չգիտեին, որ կոթողներն ու խաչքարերը տապանաքարեր չեն, որ խաչքարերը երևան են եկել միայն IX դարից, որ «հայկական սովորույթ» անվանվածը ձևավորվել է ոչ թե I – III դարերում կամ վաղ միջնադարում, այլ շատ ավելի ուշ, որ կոթողների ու խաչքարերի բեկորները օգտագործվել են ոչ միայն ավերված եկեղեցիները վերակառուցելու կամ նորոգելու դեպքում, այլև բնակելի տներ, գոմեր, պարիսպներ կառուցելիս, օգտագործվել են անգամ գերեզմաններում՝ իբրև տապանաքար: Բսկ միակ պատճառը, անկասկած, միջոցների սղությունն է եղել: Բավարար է մատնացույց անել Սևանա կղզու սբ. Առաքելոց եկեղեցին, ուր որպես ծածկասալ օգտագործված խաչքարերը՝ քանդակագարդ նիստերն երեսնիվայր, դրվել են շաղախի վրա: Այս պարագայում մտածել, թե ընդամենը 0,52 x 0,69 մ և 0,47 x 0,66 մ չափերի երկու քար կարող էր իբրև սովորական շինանյութ օգտագործվեր առաջին Կաթողիկեի պատի շարվածքում, որը ի դեպ, ոչ միայն իր ժամանակի, այլև Հայաստանում կառուցված՝ չափերով ամենամեծ եկեղեցիներից մեկն է, պարզապես անընդունելի է:

Հարկ է նկատել, որ թեպետ քանդակների թվագրության ու պատկանելության մասին առաջ քաշված թեզերն անընդունելի են, այսուհանդերձ, հեղինակի հիմնական եզրահանգումը, որը վերաբերում է Հայաստանում մինչև Լուսավորիչը քրիստոնեական կրոնի տարածված լինելուն և պատարագի ժամանակ սիրիերենի հետ նաև հունարեն լեզուն օգտագործելուն, արդեն ապացուցված իրողություն է: Ապացուցված պիտի համարել նաև Դյուբուայի և Բորեի այն թեզը, ըստ որի՝ Մայր տաճարի որոշակի մի մաս մեզ է հասել Տրդատաշեն կառույցից:

Հովհաննես Շահյաթունյանը, քանդակների թվագրման համար ելակետ ընտրելով Մայր տաճարի շինությունը, գրում է. «... հրամանաւ Շապիոյ բ, արքային պարսից ուրացելքն ՚ի հաւատոց Մէհրուժան և Վահան զօրօք նոցին պարսից մտեալ ՚ի Հայաստան՝ յամի 380՝ ւաերեցին և գերեցին զբազում գաւառս. ընդ որս և զՎաղարշապատ քաղաք տապալեցին ՚ի հիմանց՝ զորմէ Բուզանդ պատմիչ ՚ի դ դպրութեան, ՚ի գլուխ ծե: Ուր որպէս երևի ւաերեալ էր և մեծապէս և մեծ Եկեղեցին Կաթողիկէ՝ զոր թերևս զկնի թագաւորելոյն Պապայ նորոգեալ էին նախնիք մեծին Վահանայ Մամիկոնէի՝ որպէս ստուգի ՚ի բանից փարպեցոյն: Եւ գուցէ ՚ի ժամանակէ անտի նորոգութեանն Եկեղեցոյս ՚ի նախնեաց Վահանայ մամիկոնէի՝ յորում ժամանակի տակաւին չէր տատ հայացի, մնացել իցէ յունական արձանագրութիւնն խաչաձև՝ որ եղեալ կայ ՚ի հիւսիսային որմն Եկեղեցոյս արտաքուստ զթիկամբ սրբոյ աւագանին. և Վահան մամիկոնեան ՚ի նորոգելն զայս Տաճար՝ թողեալ իցէ զայն յիւրումն տեղոց ՚ի նշան և ՚ի յարգանս իւրոցն նախնեաց: ... Բսկ ՚ի յարևմտակողմն այսր յունական արձանի ՚ի նոյն բարձրութեան՝ մերձ ՚ի կիսաբլորակ բուրգն սեղանոյ սրբոյն Ստեփաննոսի նախավկայի դնի միւս այլ վեմ հին աւուրց՝ յորում կոփեալ

են՝ յարնմտից պատկեր Պօղոսի առաքելոյն նստեալ յաթոռ ծալովի, և յարնելից պատկեր Թեկղեայ կուսի կանգուն ՚ի յոտին»<sup>15</sup>:

Փափստոս Բուզանդի վկայությունը հետևյալն է. Շապուհ արքան իր իշխաններից Զիկին ու Կարենին հինգ հարյուր բյուր գորքով ուղարկում է Հայոց աշխարհի վրա. «Առնուին և գՎաղարշապատ քաղաք. քանդէին բրէին զքաղաքն ՚ի հիմանց տապալէին, և խաղացուցանէին յայնմ ևս քաղաքէ իննևտասն երդս հազար: Ընդ ամենայն քաղաքս ոչ թողին ամենին շինած. զի զամենայն տապալէին, քակեալ քանդէին...»<sup>16</sup>: Դժվար չէ նկատել, որ Մայր տաճարին, ի դեպ նաև Հռիփսիմյանց կույսերի երեք վկայարաններին, դիպչելու մասին այստեղ որևէ խոսք կամ ակնարկ գոյություն չունի: Ավելին, մյուս բազմաթիվ քաղաքների, բնակավայրերի, ամրոցների ավերածությունների նկարագրության մեջ ևս պատմիչը հավատքի հետ կապված որևէ մեծ կամ փոքր շինություն չի հիշատակում:

Այնուհետև Շապուհ արքան՝ իր իշխանության բոլոր գորքերով, Վահանի և Մերուժանի առաջնորդությամբ, գալիս է Հայաստան. «Այնուհետև Վահանն մամիկոնեան և Մերուժանն արծրունի, սոքա երկոքեան արք պիղծք անօրեն էին, ապստամբեալք էին յուխտէ աստուածապաշտութեանն, և զանաստուածն Մազդեզանց ադանդն յանձն առեալ պաշտէին, սկսան այնուհետև յերկիրն Հայոց աւերել զեկեղեցիս՝ զտեղիս աղօթիս քրիստոնէից յամենայն կողմանս Հայոց՝ զաւառաց զաւառաց և կողմանց կողմանց»<sup>17</sup>: Ակնհայտ է, որ այստեղ ևս՝ «զաւառաց զաւառաց և կողմանց կողմանց» ավերումների մեջ Վաղարշապատ քաղաքի, Մայր տաճարի, ինչպէս նաև որևէ բնակավայրի, որևէ եկեղեցու անուն անգամ չկա: Վաղ միջնադարյան մատենագրական հարուստ վկայություններում պարսկական կամ օտար այլ գորքի կողմից Մայր տաճարին մոտենալու, դիպչելու մասին որևէ տեղեկություն չկա: 480-ականներին ( ի դեպ, Վահան Մամիկոնյանի մարզպանության օրոք ) ոչ թե պարսիկները, այլ քրիստոնյա հայերը հրդեհում են տաճարի փայտաշեն ծածկը. «... ի վայրապար մարդկանց, զի ի հրոյ վնասեալ փայտակերտն եկեղեցւոյն»<sup>18</sup>: Եվ ապա, Մայր տաճարը՝ հիմնադրման օրից մինչև VII դ., նորոգվել է երկու անգամ: Առաջին նորոգումը ձեռնարկել է Վահան Մամիկոնյանը և իր օրոք հրդեհված ծածկը փոխարինել է նոր փայտակերտ ծածկով: Իսկ երկրորդ նորոգումը՝ կատարված աշխատանքների հստակ մատնանշմամբ, ձեռնարկել է Կոմիտաս կաթողիկոսը (615–628 թթ.). «վերացոյց և զփայտայարկս սրբոյ կաթողիկէն. նորոգեաց և զխախուտ որմոյն, շինեաց զքարայարկսն»<sup>19</sup>:

Շահխաթունյանցի տեսակետը, ըստ որի՝ Մայր տաճարը 360-ականներին ավերվել է, Փափստոս Բուզանդի վկայության ոչ ճիշտ մեկնաբանության արդյունք է, հետևաբար, դրանից բխող վարկածը, թե տաճարը նորոգվել է Պապ թագավորի օրոք, և այդ ժամանակ են ստեղծվել քանդակները,

<sup>15</sup> Հ. Շ ա հ ի ս թ ու ն է ա ն ց. նշվ. աշխ., էջ 18–19:

<sup>16</sup> Փափստոսի Բիզանդացույ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 261:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 269:

<sup>18</sup> Ղ ա գ ա ր Փ ա ր պ է ց ի. Հայոց պատմություն. Թուրք Վահան Մամիկոնյանին, բնական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխայանցի, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Բ. Ուլուբաբյանի, Երևան, 1982, էջ 446:

<sup>19</sup> Պատմութիւն Սեբեոսի, Երևան, 1979, էջ 121:

անգամ իբրև վարկած, անընդունելի են: Այսուհանդերձ, Շահխաթունյանը երկու կարևոր դիտարկում ունի, որոնք մինչ օրս չեն նկատվել կամ էլ հանիրավի անտեսվել են: Նախ, նրա կարծիքով, անկախ նորոգումներից Մայր տաճարը «... կայ յայնմ դրութեան... որպէս յառաջն անդ ՚ի մեծէն Գրիգորէ... անփոփոխ հասեալ ցմեզ կա ՚ի նոյնութեան առանց ինչ ընդարձակութեան և փոքրկութեան... ՚ի վերայ նոյն առաջին հիմանն ըստ ամենայն ձևակերպութեանցն»<sup>20</sup>, և Վահան Մամիկոնյանը տաճարը նորոգել է «ըստ առաջնոյն սրբատաշ քարամբ»<sup>21</sup> և ապա նորոգման ժամանակ «Խաչապատկերին» ձեռք չեն տվել՝ «թողեալ իցէ զայն յիւրոյն տեղւոջ», իսկ «Պողոս և Թեկղի» քանդակին ձեռք են տվել՝ «դնի միւս այլ վէմ հին աւուրց»: Բացառելով Պապ թագավորի օրոք արված որևէ նորոգում, կոնկրետ հյուսիսային պատից աջ ընկած հատվածի նորոգումը, որտեղ «Պողոս առաքյալ և սուրբ Թեկղի» քանդակն է, 480-ականներին արված լինելու չ. Շահխաթունյանցի կարծիքն ընդունելի է:

Ղևոնդ Ալիշանն ընդունում է տաճարը պարսիկների կողմից «ի հիմանց» ավերելու և Վահան Մամիկոնյանի օրոք «հիմնարկեալ» նորոգելու վարկածը, սակայն չի բացառում քանդակների պատկանելությունը Տրդատաշեն տաճարին. «Ի հին շինութեանց անտի՝ յառաջնոյն կամ յերկրորդէն՝ (նկատի ունի Պապ թագավորի օրոք արված նորոգումը – Վ. Գ.) թուին յառաջ քան զգիւտ հայ տառից՝ մնացեալ երկու քանդակք յունատառք, ազուցեալք այժմ ՚ի հիւսիսային որմն արտաքուստ...»<sup>22</sup>: Ղ. Ալիշանը, ինչպես նաև Չ. Շահխաթունյանը քանդակների ժամանակագրական վերին սահմանը համարում են հայ գրերի գյուտը՝ 405 թ.: Այս տեսակետը մերժելու համար բավական է մատնանշել Ավանի տաճարի երկլեզվյան՝ հայերեն ու հունարեն արձանագրությունը, որտեղ հիշատակված է Եզր կաթողիկոսը (630–641 թթ.) և Զվարթնոց տաճարի հունարեն արձանագրությունն ու խոյակներին առկա հունատառ մենագրերը, որոնց հեղինակը Ներսես կաթողիկոսն է (641–661 թթ.):

Չ. Ստրժիգովսկու կարծիքով Շահ Աբասը 1604-ին Մայր տաճարը կործանել և փլատակները տեղափոխել է Նոր Զուղա, իսկ այժմյան շինությունը կառուցվել է 1627-ին<sup>23</sup>: Այս տեսակետին անդրադարձել է դեռևս Թորոս Թորամանյանը. «Ստրժիգովսկիի համար ներելի են այդ խեղաթյուրումները՝ քանի որ ինքը հայերեն չգիտեր վերոհիշյալ երկու աղբյուրները անձամբ ուսումնասիրելու համար. այս պարագան դատապարտությունը կմնա տեղեկատուին, որ տգիտաբար մոլորության մեջ է ձգեր գիտնականը: Թեև Ստրժիգովսկի ինքն ալ բոլորովին մեղադրանքե ազատ չէ կարող ըլլալ, որ, հիմնվելով իր տեղեկատուին տված մանրամասնություններուն վրա, չէ հետաքրքրվել Էջմիածնի տաճարը արվեստագիտորեն քննելու և բոլորովին իզուր մեղադրել է Դյուբուայի նման բարեխիղճ գիտ-

<sup>20</sup> Չ. Շահխաթունյան, նշվ. աշխ., էջ 15–16:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 21:

<sup>22</sup> Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 213:

<sup>23</sup> Չ. Ստրժիգովսկի, էջ 7:

նականին...<sup>24</sup>: Հ. Մտրժիգովսկին, անտեսելով քանդակների թվագրման համար կարևորագույն պայմաններից մեկը՝ կանգուն տաճարը, գտնում է, որ երկու քանդակները սկզբում պատկանել են վայրը, ժամանակը, անունը, վիճակը անհայտ ինչ-որ եկեղեցու և այդ երևակայական եկեղեցուց բերել ու դրել են «նորակառույց» Մայր տաճարի հյուսիսային պատի շարվածքում: Ինչևէ, դառնանք քանդակներին: Հ. Մտրժիգովսկին գրում է. «Առաջինը, որուն վրայ Պալոուս եւ Թեկղ կը յիշուին... յոնիական սեամբ մ' երկու կամարի բաժնուած է: ... Քանդակն այնչափ յոռի է՝ որ ի սկզբան նոր նմանողութիւն մը կարծեցի, ինչպէս վերջին դարուց ամէն յոյն եկեղեցեաց մէջ կը գտնենք, բայց միշտ աւելի յաջողած: Սակայն բաց ի այն պարագայէն՝ որ քանդակս արդէն ԺԷ դարուն եկեղեցույս որմոց մէջ ագուցուած էր, նաեւ նկարիս առարկան նորագոյն արուեստին խորթ է: Այս առարկան կը պակսի Աթոս լերան Նկարաց-մատենին մէջ թէ *Didron*-ի հրատարակութեան եւ թէ Ա. Կոստանդինիդիսի ճոխացեալ խմբագրութեան մէջ: *Ընդհակառակն մատենագրական աղբիւրներ, մանաւանդ Դ եւ Ե դարու փոսկրէ տախտակ մը բրիտանական թանգարանի (Garr. 446, II) եւ Աթոս լերան Ամենակալի Այլակերպութիւն եկեղեցւոյն ԺԱ դարէն Նոր Կտակարանի ձեռագրին 63 a թղթոյն վրայի մանրանկարը – ձախ կողմը Պալոուս՝ որ կը գրէ, աջ կողմը Թեկղ զարմացած կը նայի պատուհանէ մը – կը ցուցնեն՝ որ հին բիզանդեան ժամանակն այս նիւթը սիրելի էր: Բսկ ի Լոնտոն բարձրաքանդակի մը մէջ Պալոուս նստած է աջ կողմն՝ երեսն ի ձախ, ինչպէս *Էջմիածնի քանդակին* վրայ, իսկ Թեկղ ձախ կողմն է: Ուստի ընդհանուր ձեւը նոյն է *Էջմիածնի քանդակին*, թէեւ մանրամասնութեանց մէջ տարբերութիւնք կան եւ ամբողջն աւելի ազնիւ քանդակուած է: Չենք կրնար ուրեմն *Էջմիածնի քանդակը* Ե կամ Չ դարէն շատ ետքը ձգել, ինչպէս եւ ոչ Լոնտոնինը: Այս ժամանակին հետ համեմատ է եւ այն պարագայն՝ որ երկու խորշերն իրարմէ բաժանող սեան յոնիական խոյակն ունի նաեւ դարեւանդ մը, գոր ամէնէ կանուխ միայն Ուրսուէն (400–410) շինուած Ռալեննայի *S. Giovanni in Fonte* կաթողիկէայց մկրտարանին մէջ կրցած ենք գտնել»<sup>25</sup>:*

Հ. Մտրժիգովսկու բերած օրինակները՝ գուտ ճանաչողական առումով, ինչ խոսք, ուշագրավ են: Սակայն դրանք որևէ պարզաբանում չեն մտցնում և չեն կարող հիմք հանդիսանալ Մայր տաճարի քանդակները թվագրելու համար: Պողոս առաքյալի և Թեկղի սրբի կերպարները ստեղծագործության նյութ կարող էին դառնալ և՛ I-III դդ., և՛ IV դ. սկզբներին, և՛ հաջորդ դարերում: Ինչ վերաբերում է հոնիական սյանը և հոնիական խոյակին, ապա այստեղ գործ ունենք փաստական սխալի հետ: Հեղինակը Հ. Շահխաթունյանցի ներկայացրած գծապատկերի վրա փոփոխություն է կատարում. «... սյան խոյակը բնագրին համեմատ ուղղած եմ»<sup>26</sup>: Դժվար չէ նկատել, որ սյունը դեպի վեր նեղացնելուց զատ, խոյակի, այսպէս կոչված, ուղղումները՝ պարույրներն ու սեղանաձև դարավանդը, բնագրի հետ

<sup>24</sup> Թ. Թ. Ն. Ր. Ա. Մ. Ն. Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. 1, Երևան, 1942, էջ 61:

<sup>25</sup> Հ. Մտրժիգովսկի, էջ 5–6:

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 5, ծանոթ. 5:



որևէ կապ չունեն։ Եթե մի պահ ընդունենք անգամ, որ խոյակը հռնիական է, ապա դրա վաղ օրինակը ոչ թե Ռավեննայի մկրտարանն է, այլ՝ մ. թ. ա. VII դ. երկրորդ կեսով թվագրվող Կարանգունայի մոտ գտնվող «մայր և աղջիկ» դամբարանը, որի ճակատը ձևավորող չորս սյուները պսակված են հռնիական պարույրազարդ խոյակներով<sup>27</sup>։

«Խաչապատկերի» մասին Հ. Ստրժիգովսկին գրում է. «Որոշիչ է այս նկատմամբ Քրիստոսի մենագիրը, որ այսպիսի առանցից ուղղութեամբ առաջին անգամ 355 ին՝ արձանագրութեան մը մէջ կը գտնենք։ Կ. Պոլսոյ մէջ այս տեսակէն ամենահինը հազիւ 390 ին Թէոդոս Մեծին Ոսկեդրան վրայ կրնանք գտնել։ Երկրորդ անգամ կը գտնենք նոյնը Թէոդոս Բ-ի Արկադեայ համար կանգնած սեան վրայ, որմէ մնացորդ մը կայ յԱլլրէդպագար։ ... Եւ որովհետեւ չենք կրնար ընդունիլ՝ թէ մենագիրն ի Հայս նախ սկսած է քան ի Հռովմ եւ Կ. Պոլիս, ուստի արձանագրութեանս յօրինման ժամանակը պէտք է մինչեւ Ե կամ Չ դար յետս մղել»<sup>28</sup>։ Խոսքը վերաբերում է Քրիստոսի՝ երկու սկզբնատարներով կազմված մենագրին, որը, ըստ Կոստանդ Մեծի կենսագիր Եվսեբիոս Կեսարացու, կայսրը տեսնում է արթմնի, ապա նաև քնի մէջ և, այն դարձնելով զինանշան, 312-ին հաղթանակ է տանում պատերազմում<sup>29</sup>։ Նախ նկատենք, որ կայսրության կենտրոնում տեղի ունեցող քիչ թե շատ նշանակալից իրադարձությունները անմիջապէս տարածում էին գտնում ենթակա բոլոր երկրներում։ Հայաստանում, ուր քրիստոնեությունը մեկ տասնամյակ առաջ արդեն հռչակվել էր պետական կրոն, ամենահաղթ խաչ ի նշան հետ կապված լուրը, ամենայն մանրամասնությամբ, անկասկած հայտնի պիտի լիներ։ Դրա անառարկելի ապացույցը Ագաթանգեղոսի ընդարձակ վկայությունն է, որ կրերենք հատվածաբար. «Ընդ ժամանակսն ընդ այնոսիկ թագաւորեաց Կոստանդիանոս որդի Կոստանդեայ արքայի յերկրին Սպանիացոց և Գաղիացոց...: Եւ յԱստուած խրախուսեալ՝ դիմէր ի վերայ հեթանոսակա ն թագաւորացն, և անդէն սատակէր առ հասարակ զամենեսեան, զորս կործանէր զօրութեամբ աստուածեան խաչին...: ... Յայնմ ժամանակի լու եղն այս երկիրն Հայոց Մեծաց, ի դուռն թագաւորութեանն Արշակունեաց, առ Տրդատ արքայ Հայոց Մեծաց...: Ապա իբրև լուսաւ զայս ամենայն մեծ արքայն Հայոց Տրդատ՝ խորհուրդ առնոյր վասն ճանապարհացն այնոցիկ. հանդերձէր կազմէր առնոյր ընդ իւր զմեծ արքեպիսկոպոսն ԳԳրիգորիոս...: Եւ այլ բազում մեծամեծօք, և եօթանասուն հազարաւ ընտիր զօրու հանդերձ՝ խաղայր զնայր յԱյրարատ գաւառէ ի Վաղարշապատ քաղաքէ՝ անցանել ի սահմանս Յունաց։ ... իբրև լուսաւ աստուածակարգ թագաւորն պատուակալ արթոռոյն Կոստանդիանոս, և հայրապետն մեծ, արքեպիսկոպոսն ... Եւսեբիոս՝ մեծաւ սիրով պատիւ արարեալ՝ ընդ առաջ ելանէին, և տուեալ միմեանց զհանգիտապատիւ ողջոյնն ուրախ լինէին։ ... Եւ ապա հրաժարեալ ի ծիրանափառ օգոստականացն և ի սրբոյ կաթողիկոսէն... գային

<sup>27</sup> К. В. Т р е в е р. Очерки по истории и культуре Древней Армении (II в. до н. э. – IV в. н. э). М.–Л., 1953, с. 74, рис. 18.

<sup>28</sup> Հ. Ս տ Ր ժ ի գ ո վ ս կ ի, էջ 8:

<sup>29</sup> Մ. Ա լ գ եր ե ա ն. Լիակատար վարք եւ վկայաբանություն սրբոց, հ. Գ, Վենետիկ, 1812, էջ 246–249:

հասանելին յերկիրն Հայոց...: Ապա յետ այտորիկ հրաման էտ մեծ կայսրն, օգոստականն Կոստանդիանոս՝ ժողովել ամենայն եպիսկոպոսաց ի քաղաքն Նիկիացոց: Յայնժամ մեծ արքայն Տրդատ և սուրբ կաթողիկոսն Գրիգորիոս հանդերձեցին և արձակեցին զԱրիստակէս, որ երթեալ հասանէր ի մեծ ժողովն Նիկիայ ընդ եպիսկոպոսան ամենայն»<sup>30</sup>: Կոստանդ Մեծի տեսիլքին անդրադարձել է նաև պատմահայր Մովսէս Խորենացին. «Սա յառաջ քան զթագաւորելն, մինչ դեռ կայսր էր, պարտեալ ի մարտն, և տրտմութեամբ մեծաւ ննջեալ՝ երևութացաւ նմա ի քուն իսպ աստղեայ յերկնից, պարունակեալ գրով, ասէ. «Այսու յաղթեա, զոր արարեալ սիւզնոյն և յառաջաբերեալ՝ յաղթեաց պատերազմացն»<sup>31</sup>:

Հ. Ստրժիգովսկին, եթե ծանոթ լինէր այս վկայություններին, դժվար թե Մայր տաճարի քանդակը V– VI դդ. թվագրեր: Ավելին, նրան հայտնի չէր նաև, որ մինչ 312 թ. մենագիրն արդեն կար. «Ինքնին այն բավականին ավելի վաղ գոյություն ուներ իբրև հունարեն *chrestos* (երջանկություն խոստացող) բառի հապավում: Հենց այս իմաստով է, հավանաբար, գործածվել կայսեր կողմից՝ հռոմեական կայսերական դրոշակների վրա: Չկան հավաստի վկայություններ, որ կայսրը այն գործողության մեջ է դրել որևէ՝ հատկապես քրիստոնեական նշանակությամբ»<sup>32</sup>:

Այս ամենը կարևոր լինելով հանդերձ, խնդրի մեկ, կարելի է ասել, ոչ էական երեսն է միայն: Այժմ փորձենք պարզել, թե ինչ ընդհանուր բան կա «երջանկություն խոստացող» մենագրի, նրա պատճենի, այսպես կոչված, Կոստանդ Մեծի մենագրային խաչի և Մայր տաճարի խաչի միջև:

Անվիճելի է, որ ցանկացած՝ առավել ևս մենագրային խորհրդանշան, փոխառնված կարելի է համարել, եթե այն նույնությամբ կրկնում է բնագրի հորինվածքը, ինչը Կոստանդ Մեծի մենագրային խաչի պարագայում ակնհայտ է: Իսկ նախատիպի ազդեցությամբ ստեղծված կարելի է համարել միայն այն դեպքում, եթե վերջինս տարբեր ոճավորում կամ հավելումներ կրելով հանդերձ, պահպանել է մենագրի միակ նպատակը՝ ճանաչելիությունը: Մայր տաճարի խաչի պատկերում Քրիստոս անվան սկզբնատառերից հունարեն այբուբենի ոչ X տառը կա, ոչ P տառը և ոչ էլ մյուս տառերից որևէ մեկը, բնականաբար, չկա նաև դրանցով կազմված որևէ մենագիր: Այս ճշացող անհամապատասխանությունը Հ. Ստրժիգովսկին դժվար թե չնկատեր, և մնում է ենթադրել, որ այս դեպքում ևս մեղավորությունը նրա հայ տեղեկատուինն է, ով մենագրի մեջ հայերեն Ք, Բ և որևէ այլ տառի չգոյության պարագայում հաջողել է հայերեն լեզվով Քրիստոս անուն կարդալ: Կարո Ղաֆադարյանը, անդրադառնալով հայկական գրերի՝ ժամանակի ընթացքում կրած փոփոխություններին, Բ և Ք գրերի մասին մատնանշում է. «Բ–անհատական փոփոխությունների չի ենթարկվում... Ք – ստորին մասում տառասյան հատող գիծը սկզբում ուղիղ է և մեծ մասամբ գտնվում է ստեղծի բոլորովին ստորին մասում: Այս

<sup>30</sup> Ազաթանգեղայ պատմություն հայոց (այսուհետ՝ Ա գ ա թ ա ն գ ե դ ո ս), քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանցի, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1983, էջ 482–490:

<sup>31</sup> Մովսիսի Խորենացույ Պատմություն Հայոց, աշխատութեամբ Մ. Աբեղեան եւ Ս. Յարութիւնեան, Տիֆլիս, 1913, էջ 226:

<sup>32</sup> Д ж е й м с Х о л л. Словарь сюжетов и символов в искусстве. М., 2004, с. 601.

գիծը կամաց-կամաց բարձրանում է դեպի վեր...»<sup>33</sup>: Արդ, նույնություն կամ փոխազդեցություն փնտրել Մայր տաճարի և Կոստանդ Մեծի խաչերի պատկերների միջև, կարծում ենք, լուրջ անտեղի ժամանակի վատնում է, քանի որ դրանց միակ ընդհանրությունն այն է, որ երկուսն էլ քրիստոնեության խորհրդանիշներ են:

Նոր կրոնը սրբագործեց ոչ միայն հեթանոսական մեհյաններն ու սեղանները, այլև երկնային լուսատուները և դրանց խորհրդանշանները: Այս առումով ուշագրավ է Դիոկղետիանոս կայսրի Տրդատ արքային ուղարկած հրովարտակր, որտեղ խոսվում է նաև քրիստոնեական աղանդի մասին. «Ձի ինքեանք զմեռեալ ոմն զխաչեալ պաշտեն... Նա և զլուսաւորացո գորութիւն, զարեգական և զլուսնի աստեղօքո իանդերձ՝ առ ոչինչ համարին, նա և արարած առնեն այնր խաչելոյ»<sup>34</sup>:

Խնդրոտ առարկա խաչերի և երկնային լուսատուների վաղնջական ժամանակներից հայտնի խորհրդանշանների պարզ համեմատությունը բավարար ապացույց է, որ Մայր տաճարի և Կոստանդ Մեծի խաչերը տարբեր ծագում ունեն: Ուրեմն, եթե ընդունենք անգամ, որ «երջանկություն խոստացող» մենագիրը՝ իբրև քրիստոնեության խորհրդանիշ, ընդունվել է 312 թվականից, ապա այն չի կարող հիմք հանդիսանալ Մայր տաճարի խաչը թվագրելու համար:

Ինչ վերաբերում է Մայր տաճարի խաչի կենտրոնական թևի աջակողմյան ծայրից դուրս եկող գալարաձև տարրին, ապա դա ծաղկած խաչի պարզագույն ու եզակի օրինակն է, որի տարբերակը՝ երկու ծայրերից դուրս եկող նմանատիպ տարրերով, կարող ենք տեսնել Աղձքի դամբարանի և Քասաղի տաճարի երկուական քանդակներում: Աղձքի մուտքի աջակողմյան սալի քանդակում երկու գալարներն ավարտվում են խաղողի ողկույզներով: Վաղ միջնադարի քանդակներում ամենասիրված ու կատարելության հասցված թեման խաղողի պտղաբերող որթի մեջ առնված խաչն է, որի օրինակները բազմաթիվ են եկեղեցիների, քառակող կոթողների, ինչպես նաև հետագա շրջանի խաչքարերի վրա: Հունական և սիրիական մի շարք խաչապատկերներում հորինվածքի հիմնական մաս են կազմում նաև հունարեն այբուբենի առաջին և վերջին տառերը, որոնք մատնանշում են Հիսուսի խոսքը. «Ես եմ Ալֆան եւ ես եմ Օմեղան» (Յայտնություն 1.8): Հայկական խաչապատկերներում նման որևէ օրինակ գոյություն չունի, հայերը նախընտրել են հավերժացնել Հիսուսի մեկ այլ խոսքը. «Ես եմ ճշմարիտ որթնատունկը» (Յովհաննէս 15.1): Ինչ վերաբերում է մենագրային խաչից հայերեն Ք տառի ծագմանն առնչվող մոռացված մի վարկածի, որն այսօր փորձ է արվում «վերակենդանացնել», ապա տեղին է հիշատակել ժամանակին այդ վարկածը մերժած գիտնականի՝ Հրայրա Աճառյանի խոսքը. «Մեր բարեպաշտ հայերը թույլ չէին տա իրենց այսպիսի սրբազան անունների հետ խաղեր անել»<sup>35</sup>:

<sup>33</sup> Կ. Ղ ա Ֆ ա դ ա ր յ ա ն. Էջեր հայոց միջնադարյան մշակույթի և պատմության, Երևան, 2007, էջ 146-147:

<sup>34</sup> Ա գ ա թ ա ն գ ե դ ո ս, էջ 92:

<sup>35</sup> Հ. Ա ճ ա ո յ ա ն. Հայոց գրերը, Երևան, 1984, էջ 554:

Հ. Ստրժիգովսկին անդրադառնալով արձանագրություններին՝ Արքեային և Էլպի-դին համարում է ննջեցյալներ ու գտնում, որ նրանք ամուսիններ են: Իսկ այդ ամուսնական զույգի հիշատակի համար ստեղծված քանդակի ու գրությունների հեղինակներն են Դանիելը, Տիրերը և Գարիկինիսը: Չվիթը համարում է այն եկեղեցու քահանայի անձնանունը, որտեղից քանդակները բերել ու դրել են Մայր տաճարի պատին<sup>36</sup>: Վերը ցույց տվեցինք, որ Արքեան և Էլպիդը ննջեցյալներ չեն, ուստի իրենց գրությունը փորագրել են տվել իրենք: Այս հարցին կարելի էր նորից չանդրադառնալ, սակայն, հեղինակը փորձ է արել կապ տեսնել գրությունների և քանդակի միջև: Քանդակի հորինվածքում գրությունների տեղադրման կերպը արդեն իսկ բացատում է ենթադրվող որևէ կապի հնարավորություն: Անհնար է պատկերացնել որևէ՝ թող որ ինքնասիրահարված կամ ապաշնորհ քանդակագործի, իսկ դրանք երեքն են, որ Արքեայի և Էլպիդի հիշատակը հավերժացնելու համար ստեղծվելիք պատկերաքանդակի վրա գրության համար պատշաճ մակերես չնախատեսեին, ամբողջական տեքստը մասնատեին ու բառացիորեն խցկեին տարբեր տեղեր: Իսկ գրությունների համար սովորաբար նախատեսվող ծիծեռնակապոչ տախտակին փորագրեին ոչ թե հիշատակի աղոթքը, այլ իրենց անունները՝ մեծ-մեծ տառերով: Ենթադրությունների ոլորտին է պատկանում նաև Չվիթին անհայտ եկեղեցու քահանա համարելը, քանի որ գրության մեջ նրա հոգևոր կոչումը՝ քահանա կամ երեց, բացակայում է:

Հունարեն գրությունների օրինակներ կան նաև Երեքուլքի տաճարում: Ն. Մառը, ներկայացնելով Հակոբ քահանայի անթվակիր (իր կարծիքով X դ.) և թագուհու՝ 1038 թ. հանրահայտ արձանագրությունները, գրում է. «Պատերը, ինչպես դրսում, այնպես էլ ներսում, հասկապես կենտրոնական խորանը, ծածկված են հայերեն գրություններով: Կան նաև երկու հունարեն գրություններ, սակայն շատ ավելի ուշ շրջանի՝ XVII–XVIII դդ., որոնք պատահական այցելուների վարժանքներ են»<sup>37</sup>: Հունարեն գրությունները փորագրված են հարավարևելյան ավանդատան արտաքին պատին (III շարք, աջակողմյան I քար) և գլխավոր խորանի ներսում (V շարք, ձախակողմյան I քար): Ավանդատան պատին զետեղվածը հանրահայտ ծիծեռնակապոչ տախտակն է: Խորանի հունարեն գրությունը (նկ. 4)<sup>38</sup>, ինչպես նաև թվագրված հայերեն գրությունները (նկ. 5–9) գիտական շրջանառության մեջ ենք դնում առաջին անգամ: Հունարեն գրությունների թվագրումը՝ XVII–XVIII դդ., և պատահական անցորդների կողմից գրված լինելու հանգամանքը այնքան ակնհայտ են եղել, որ Ն. Մառը որևէ փաստարկ չի ներկայացրել: Այն ակնհայտ է նաև այսօր. տաճարի ներսի, դրսի,

<sup>36</sup> Հ. Ստրժիգովսկի, էջ 7:

<sup>37</sup> Н. Я. М а р р. Ереруйская базилика. Ереван, 1968, с. 19.

<sup>38</sup> Ֆ. Շելով-Վովեդյանը, վկայակոչելով Ն. Մառի վերը բերված խոսքը, նկատում է, որ 1972-ին Ա. Վիսոցկին, 1983-ին Ֆ. Տեր Մարտիրոսովը հունարեն երկրորդ գրությունը չեն գտել, մինչդեռ 1984-ին իրեն հաջողվել է գտնել: Ներկայացնելով հարավարևելյան ավանդատան արևելահայաց պատի՝ պատահական այցելուի ձեռքով խազած «հունական խաչք» և վերջինիս ուղղաձիգ ու հորիզոնական թների ծայրերի առկա հունարեն երկու տառը, այն համարում է Ն. Մառի մասնանշած երկրորդ գրությունը և առանց որևէ հիմնավորման թվագրում է VI–VII դդ. (տես՝ Փ. В. Ш е л о в-К о в е д я е в. Заметки по греческой эпиграфике Армении. – ИФЖ, 1986, № 1, с. 59, 65):



Նկ. 1



Նկ. 2



Նկ. 3



Նկ. 4

ԵՍԱՆ Ա ՇԻՄԻԱԲԱՍԱԿ  
ՔԱՆՈՒՃԼԼ

Նկ. 5

ԵՍ ԱՐ ԳՐԻԳՐԻԱ  
ԳՐ Ե ՕԻՆՎԻՃԻՐ

Նկ. 6

ՍՊԱՆՆՆԵՅԻ  
ՍՊԱՆՆՆԵՅԻ  
ՈՐՍՆՆՆԵՅԻ  
ՆՔԱՆՆՆԵՅԻ

Նկ. 7

ԵՍ ԸՆԸՎԵՅ Ի  
ԳԻՐԵՅ ԲՎԵՅ  
ՆՇԻՄ

Նկ. 8

ԵՍԱԶԱՆԵ ԿԻՐՆ

Նկ. 9

այդ թվում նաև խորանի ներսի ու դրսի պատերին առկա շուրջ քառասուն, պատահական մարդկանց թողած հայերեն գրություններից հինգը թվակիր են: Ներսում՝ խորանի ձախակողմյան արևմտահայաց քարերին, առկա երկու գրությունները թվագրված են 1652 թ. և 1673 թ. (նկ. 5, 6), հարավային ճակատի երկու գրությունները՝ 1667 թ. և 1672 թ. (նկ. 7, 8), իսկ հինգերորդում պահպանվել է միայն առաջին տառանիշը՝ Ռ -1000 (նկ. 9):

Ն. Մառը հունարեն գրությունները թվագրելու համար, անկասկած, նկատի է առել հայերեն այս գրությունները: Բսկ այս պարագան վկայությունն է այն բանի, որ հունարեն գրությունները փորագրվել են ոչ միայն վաղ, այլև ուշ միջնադարում, և ապա, գրությունները փորագրվել են այն ժամանակ, երբ տաճարը լքված ու ավերված է եղել: Քանզի բացառված է, որ որևէ մեկին, այն էլ պատահական այցելուի, թույլ տրվեր հայերեն կամ հունարեն գրություններ փորագրել գործող եկեղեցու պատերին, այն էլ ներսում՝ գլխավոր խորանի պատին:

Երերույքի տաճարում առկա երկու փաստերը՝ շինության լքված, ավերված վիճակը և գլխավոր խորանի հունարեն գրությունը, բացառիկ արժեք ունեն և կարող են հիմք հանդիսանալ Մայր տաճարի գրությունների ժամանակագրական սահմանները որոշադրելու հարցում: Վաղ միջնադարի պաշտամունքային շինությունների պատերին տեղ գտած արձանագրությունները, իբրև կանոն, գրվել են եկեղեցու հայրերի և աշխարհիկ նշանավոր անձանց կողմից: «Խաչապատկերի» գրություններում հիշատակված բոլոր անձնավորություններն անհայտ են, ուստի բացառվում է, որ IV–VII դարերում, պատահական այցելուներ գրություններ անեին՝ այն էլ խաչաքանդակի վրա: Ուշագրավ է Առաքել Դավրիժեցու վկայությունը՝ XVII դարում Մայր տաճարի, Հոհիփսիմեի և Գայանեի շինությունների վիճակի մասին. «Եւ երեքին տաճարքս... էին աւերեալ, խախտեալ եւ խարխալեալ եւ անշքացեալ... յէջմիածին կային միաբանք սակաւք, եւ այնք նս յոյժ տգէտք եւ գռեհիկք»<sup>39</sup>: Նկատի առնելով քանդակների բարձրադիր տեղադրությունը, պետք է ենթադրել, որ գրություններն արվել են որևէ «յոյժ տգէտք եւ գռեհիկք» հոգևորականի թողտվությամբ:

Այս ամենը բերում է այն համոզման, որ «Խաչապատկերի» հունարեն գրությունների թվագրումը հարկ է փնտրել VIII–XVIII դդ. ժամանակահատվածում: Ինչ վերաբերում է «Պողոս» և «Թեկղի» գրություններին, ապա դրանք, հավանաբար, փորագրվել են «Խաչապատկերի» գրություններից որևէ մեկի հետ: Տեղին է հիշել, որ Աղթամարի ս. Խաչ եկեղեցու (X դ.) բարձրաքանդակներից մի քանիսի մակագրությունները հավելվել են XVIII դարում<sup>40</sup>:

Թ. Թորամանյանը վաղ միջնադարի ճարտարապետության ընթացքը լուսաբանելիս մեծ դեր է վերապահել քանդակագործությանը և, մի շարք կոթողների պատկերաքանդակների մասին հստակ ու միանշանակ կարծիք հայտնելով հանդերձ, Մայր տաճարի քանդակների ու արձանագրությունների

<sup>39</sup> Պատմություն Առաքել վարդապետի Դավրիժեցույ, Վաղարշապատ, 1896, էջ 180:

<sup>40</sup> И. А. О р б е л и. Избранные труды. Ереван, 1963, с. 112; Մ. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. Աղթամար, Երևան, 1983, էջ 62, 73:



405 թ.: Այս, ինչպես նաև տառաձևերի, հիշատակվող անձնանունների և բովանդակության հիման վրա արված և մինչ օրս շրջանառության մեջ դրված թվագրումները՝ 360-ականներ – VI դդ., ընդամենը վարկածներ են և, անգամ իբրև այդպիսիք, անընդունելի են: Ուրեմն, խնդրի լուծման համար անհրաժեշտ երեք պայմաններից բացառվում է նաև երկրորդը:

Գ. Մայր տաճարը: Տրդատ Մեծի (Հայոց թագավոր՝ 287–330) և Գրիգոր Լուսավորչի (Հայոց կաթողիկոս՝ 302–325) օրոք Մայր տաճարի՝ հիմնադրված և կառուցված լինելու տեսակետն անվիճելի է: Փաստ, որի հիմքում մատենագրական հարուստ վկայություններն են՝ հայագիտությանն առնչվող օտարագրի և հայ հետազոտողների կողմից անվերապահորեն ընդունված: Տաճարը 360-ականներին ավերված լինելու, նորոգելու, իսկ 480-ականներին հիմնիվեր նոր տաճար կառուցելու ենթադրությունը, որն այսօր էլ, կամա թե ակամա, համառոտ են երկայացվում է իբրև փաստ, ընդամենը մատենագրական տեղեկությունների սխալ ըմբռնման և սխալ մեկնաբանության արդյունք է: Բացարձակ անհիմն են նաև քանդակները գերեզմանոցից, գերեզմանական կառույցից կամ անհայտ եկեղեցուց բերված համարելու վարկածները: Ուրեմն, խնդրի լուծման համար կարող է հիմք հանդիսանալ միայն Մայր տաճարը:

Մայր տաճարի շինության՝ հորիզոնական քիվից ցած ընկած հիմնական ծավալը, մասնավորապես, հյուսիսարևելյան պատը՝ նորոգումներով հանդերձ, մեզ է հասել իր նախաստեղծ վիճակում: Դիտարկենք տաճարի այդ հատվածը: Եռաստիճան որմնախարսիսիւր և պատի ստորին երեք շարքերը՝ 3.62 մ բարձրությամբ, XVIII դարում երեսապատվել են: Դրանից վեր ընկած տասնմեկ շարքերը, բացառությամբ պատուհանի և դրանից աջ ընկած հատվածի, պահպանվել են Տրդատաշեն կառույցից: «Խաչապատկերը» պատի այդ հատվածի հետ միաձույլ է, այսինքն՝ գտնվում է իր սկզբնական տեղում: Պատի աջակողմյան հատվածը, որտեղ «Պողոս առաքյալ և սուրբ Թեկղի» քանդակն է, ակներևորեն նորոգված է: Վերաշարը կատարվել է հիմնականում նույն քարերով, սակայն պատի հորիզոնական շարքերի կարանների անընդհատությունը չի պահպանվել, որի հետևանքով քանդակը «Խաչապատկերից» փոքր-ինչ վեր է տեղադրվել: «Սուրբ Երրորդություն» քանդակը իր սկզբնական տեղում չէ: Երեք դափնեպսակներից կազմված հորինվածքի շեղվածությունը հորիզոնական դիրքից հուշում է, որ մեծադիր սալի եզրերը վնասված են եղել, կոտրվածքները հեռացնելու և ուղղանկյուն ձևի բերելու արդյունքում սալի չափերը փոքրացել են՝ 0,56 x 0,91,5 մ, և քանդակը, ի դեպ, գլխիվայր դրվել է հարավարևմտյան նորոգվող պատի շարվածքում: Ի սկզբանե մեծ չափերի քանդակագարդ սալը, անկասկած, տեղադրված է եղել շինության ստորին մասում, և չի բացառվում, որ այն Մայր տաճարի վեց մուտքերից մեկի բարավորը եղած լինի:

Արդ, խնդրո առարկա քանդակներն ի սկզբանե պատկանել են և այսօր էլ պատկանում են Տրդատ Մեծի և Գրիգոր Լուսավորչի կառուցած շինությանը: Սա իրողություն է, ինչը պարտավոր ենք ընդունել: Կասկածի տակ առնելու կամ մերժելու դեպքում հարկ է ներկայացնել միայն ու միայն անառարկելի փաստեր և ոչ թե ենթադրություններ:



*Եվ քանի որ մինչ օրս առաջ քաշված՝ հավանական ու անհավանական վարկածները, հուսով ենք, արդեն կարելի է համարել սպառված, ուրեմն, կարող ենք եզրակացնել. Մայր տաճարի «Խաչապատկեր», «Պողոս առաքյալ ու սուրբ Թեկղի», «Սուրբ Երրորդություն» քանդակները ստեղծվել են 302–325 թվականներին:*

## ВОПРОС ДАТИРОВКИ ТРЕХ ДРЕВНЕЙШИХ СКУЛЬПТУР КАФЕДРАЛЬНОГО СОБОРА

*ՎԱԱԳՆ ԳՐԻԳՐՅԱՆ*

### Резюме

К рельефам «Крест», «Апостол Павел и святая Фекла», «Святая Троица» Кафедрального собора первой страны, объявившей христианство государственной религией, еще с 1838 г. обращалось около двух десятков иностранных и армянских исследователей, датируя памятники примерно с I по VI вв. Обращает на себя внимание и вызывает удивление, что из этого продолжительного времени исключены только годы основания и строительства собора – 302–325. Наше изучение Кафедрального собора приводит к следующим результатам. Мнения, что камни с рельефами перенесены к собору с кладбища, от какого-то погребального сооружения или из неизвестной церкви – всего лишь гипотезы, однако, и в качестве таковых, неприемлемы. Также неприемлемы датировки (с I по III вв. до 405 г., 360-х гг.– VI в.), которые вплоть до наших дней делаются на основе содержания надписей, видов букв, упомянутых имен на рельефе «Крест». Датировку надписей следует искать в промежутке между VIII–XVIII вв. Отдельные детали композиций, в частности, высказывания по поводу сходства равноконечных крестов на рельефе «Крест» и монограммы Константина также не могут служить основанием для датировок. Стоящая перед наукой задача точных датировок рельефов, основанных на семасиологических и иконографических описаниях, в настоящее время неразрешима. Неоспорима точка зрения об основании и сооружении собора во времена Трдата Великого (армянского царя, 287–330 гг.) и Григория Просветителя (Католикоса армян, 302–325 гг.). Результатом ложных толкований летописных свидетельств являются высказывания о разрушении и восстановлении собора в 360-х годах и его новом основании в 480-х годах. Многочисленные вероятные и невероятные гипотезы, выдвигаемые поныне, надеемся, уже можно считать исчерпанными и, значит, можно утверждать, что три рельефа Кафедрального собора созданы изначально, параллельно со строительством, с 302 по 325 годы.

THE PROBLEM OF DATING THE THREE EARLIEST RELIEFS  
OF THE ECHMIADZIN CATHEDRAL

*VAHAGN GRIGORYAN*

S u m m a r y

Since 1838, about twenty foreign and Armenian researchers have touched upon the reliefs “The Cross”, “The Apostle Paul and Saint Thekla” and “The Holy Trinity” of the earliest Cathedral of the country that was the first to proclaim Christianity as state religion and dated them from the 1st–6th centuries. Noteworthy and strange is the fact that in the long course of centuries only 302–325, the years of founding and building the Cathedral, have been ruled out. Our examination of the Echmiadzin Cathedral brings to the following conclusions. The viewpoints that the Cathedral reliefs had been brought from a grave, a sepulchral structure or an unknown church are merely hypotheses, and even as such, are not acceptable. Datings (from the 1st – 3rd centuries to 405, from 360 to the 6th century) made hitherto and based on the inscriptions of the relief “The Cross”, i.e. letter forms, records of names and contents are also unacceptable. The dating of these inscriptions should be looked for within the period of the 8th–18th centuries. The viewpoints referring to the compositions and separate details of the reliefs, especially to the similarity of the equal-armed cross on the relief “The Cross” and the monogram of Costantine cannot serve as a basis for the dating of the reliefs. The exact dating of these reliefs based on a semantic and iconographic analysis is, perhaps, one of the unsolvable problems in science. The viewpoint that the Echmiadzin Cathedral was founded and built under Trdat the Great (Armenian king, 287 – 330) and Gregory the Illuminator (Armenian catholicos, 302 – 325) is indisputable. The opinions that the Cathedral was ruined in the 360s, then restored and that a completely new cathedral was built in the 480s is the result of a wrong interpretation of bibliographical information. So, as numerous probable and improbable hypotheses brought forward until present may be considered hopefully exhausted, we can insist that the three reliefs of the Echmiadzin Cathedral were created from the very beginning, in 302 – 325.